

ՀԻԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆ, Հայոց գրերը (գիրք առաջին), «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1968 թ., 400 էջ, գինը՝ 1 ո. 10 կ.

Հայ գրերին ու դրանց հանճարեղ ստեղծող Մեսրոպ Մաշտոցին նվիրված է հսկայական գրականություն, որի մեջ առանձնակի տեղ են զբաղում Հ. Աճառյանի ուսումնասիրությունները: Այս գիրքը բաղկացուցիչ մասն է համանուն այն աշխատության, որը դեռ ձեռագիր վիճակում 1905 թ. արժանացել էր Լաղարյան ճեմարանի մրցանակին: Հիշյալ աշխատությունը, ինչպես ծանուցում է հեղինակը, բաղկացած է եղել 3 մասից: Առաջին մասը՝ «Ս. Մեսրոպի ու գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոնց քննությունը» վերնագրով 1907 թ. տպագրվել է Փարիզի «Բանասերում»՝ որպես հավելված և ապա արտատպվել առանձին գրքույկով: Երրորդ մասը հատվածաբար տպագրվել է «Հանդես ամսօրյայում»՝ սկսած 1910 թ., իսկ 1928 թ. Վիեննայում լույս տեսավ առանձին գրքով՝ «Հայոց գրերը» խորագրով: Երկրորդ մասը հեղինակի կենդանության օրոք անտիպ էր մնացել: Սա էլ հողվածաշարի ձևով, սակայն ոչ լրիվ, տպագրվեց «էջմիածին» պարբերականում (1958—1962 թթ.):

Հեղինակը ժամանակին ինչ էլ որ հրատարակել է, հարցն ամենևին սպառված չի համարել, այլ շարունակել է հետազոտել, նկատի է առել թեմային վերաբերող նորանոր ուսումնասիրություններ, այդպիսով լրացումներ կատարելով՝ ձգտել է աշխատությունն առավել հանգամանալից դարձնել ու հրապարակ հանել ամբողջականությամբ: Այժմ միայն ուրախությամբ կարող ենք նշել, որ իրականսում է երախտավոր հեղինակի ժամանակին անկատար մնացած երազանքը. ամբողջական հրատարակության ձեռնարկումով այդ հետաքրքրական ու արժեքավոր երկը դարձվում է ընթերցողի սեփականությունը:

Գրախոսվող այս գիրքն ընդգրկում է ամբողջ աշխատության առաջին երկու մասերը՝ «Աղբյուրներ և նրանց քննությունը», «Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը»: Աղբյուրները բաժանված են երկու խմբի՝ հին և նոր: Բաժանման սահմանն ընդունված է XVIII դարը: Հին աղբյուրներ են համարվում «այն բոլոր մեծ ու փոքր գրությունները, որոնք գտնվում են հին մատենագրության մեջ»: Այս դեպքում,

իհարկե, «հին մատենագրություն» հասկացության մեջ ներառվում է նաև միջնադարյանը: Հեղինակը, հենվելով հին աղբյուրների պատմական արժեքի ու բնույթի վրա, միանգամայն հասկանալի կերպով ներքին շերտավորում է կատարում: Բանասիրության համար արժանահավատ ու ավելի վստահելի են համարվում այն հեղինակների գործերը, որոնք համապատասխան դեպքերին ժամանակակից են կամ՝ ժամանակով մոտ: Դրանք են Կորյունը, Ղազար Փարպեցին ու Մովսես Խորենացին: Հետագայի աղբյուրների մեջ կան այս հեղինակների հաղորդած տեղեկությունների կրկնություններ, բայց և կան հավելումներ, նոր տվյալներ: Այս վերջին կարգի տեղեկությունների մեջ կարող են լինել հեղինակային ենթադրություններ, ավանդություններ և նույնիսկ թյուրիմացություններ: Այդ նշելով՝ Հր. Աճառյանը միաժամանակ ճիշտ կերպով զգուշացնում է, որ հնագույն սկզբնաղբյուրների համեմատությամբ տեղեկությունների մեջ եղած բոլոր տարբերություններն անխտիր չպետք է արհամարհել, որովհետև այդտեղ կլինեն գիտության համար կարևոր փաստեր: Այս հանգամանքը նա հիմնավորում է հետևյալով. մեզ հասած հնագույն աղբյուրները բոլորը չեն, ամենայն հավանականությամբ ժամանակին եղել են և ուրիշները, որոնք անհետ կորած են: «Ջարմանալի է,— գրում է Հ. Աճառյանը,— որ Սահակի և Մեսրոպի կրթած 60 աշակերտներից միայն երկուսը կան, որոնցից որևիցե գրական աշխատանք հասել է մեզ»: Նրանցից ոմանք թողած կլինեն մեզ չհասած աշխատություններ: Իբրև փաստ Հ. Աճառյանը նշում է Աբրահամ Խոստովանողի «Մնացորդաց գիրք Արևելից Հայոց» պատմական աշխատությունը, որից մեջբերումներ է անում X դարի հեղինակ Մեսրոպ Երեցը: Հետևաբար վերոհիշյալ կարգի տեղեկություններից կլինեն այնպիսիները, որոնք ժամանակին քաղվել են կորած, մեզ չհասած հնագույն աղբյուրներից:

Հ. Աճառյանը, հնագույն վստահելի աղբյուրների մեջ իրավացիորեն առաջին տեղում ընդունելով Կորյունի աշխատությունը, հանգամանորեն կանգ է առնում հեղինակի

կյանքի ու գործի հետ կապված մի քանի կարևոր հարցերի վրա: «Վարք Մաշտոցի» երկի մի հատվածի վերլուծության մեջ ճիշտ կերպով ցույց է տալիս, որ Կորյունը, որպես Սահակի ու Մեսրոպի աշակերտ, Վաղարշապատի դպրոցն ավարտելուց հետո, իր դասընկերների հետ ուղարկվում է Հայաստանի գավառները՝ ուսուցչության: Նկատենք, որ այս հարցում Հ. Աճառյանը միայնակ չէ բանասիրության մեջ: Հայտնի է, որ այս նույն իրողությունը մատնացույց է արել Մ. Աբեղյանը Կորյունի երկի աշխարհաբար թարգմանության առաջաբանում:

Ապա քննվում են Կորյունի ո՛վ լինելուն, նրա երկի բուն և խմբագրված տարբերակներին, գրության ժամանակին, վավերականությանը, Ագաթանգեղոսի ու Բուղանդի գործերի հետ ունեցած առնչություններին վերաբերող խիստ հետաքրքրական հարցերը:

Հ. Աճառյանը ընդգծում է, որ հայ հին մատենագրության նշանավոր ներկայացուցիչ Կորյունի երկի՝ մեզ հասած ընդարձակ և համառոտ օրինակներից հարադատը առաջինն է, որը գրված է մեսրոպյան շրջանի հայերենով, իսկ վերջինի (համառոտի) մեջ կան ետմեսրոպյան հայերենին հատուկ լեզվական երևույթներ, որոնք վկայում են այդ տարբերակի՝ հետագա խմբագրման արդյունք լինելու մասին: Որ ընդարձակն է բնագիրը, ապացուցվում է նաև մատենագրական այլ տվյալներով (Փարպեցու և Մ. Խորենացու օգտագործած փաստերի, ինչպես և Բաբկեն եպիսկոպոսի գտած հատվածների համեմատությունները և այլն): Հայտնի է, որ այդ բնագրի հանդեպ համառոտը («Փոքր Կորյուն») մեր բանասիրության մեջ հորջորջվում է նաև «Սուտ Կորյուն»:

Երկի գրության ժամանակը Հ. Աճառյանը ընդունում է 443—450 թթ. ժամանակահատվածի սահմաններում՝ իբրև փաստարկ ծառայեցնելով Մեսրոպի մահից հետո նրա շիրմի վրա Վահան Ամատունու կողմից տաճարի կառուցման հիշատակումը, ապա նաև մատենագրի վերաբերմունքը Վասակի նկատմամբ (ինչպես անում են այլ բանասերներ ևս):

Հ. Աճառյանն ընդգծում է, որ ավելի շատ բանասերներ ընդունում են, թե Կորյունի երկը գրված է Վարդանանց պատերազմից առաջ: Սակայն միաժամանակ մատնացույց է անում, որ այդ ուսումնասիրողները, այդուհանդերձ, ունեն կարծիքների զանազանություններ, նշում են տարբեր տարեթվեր: Հ. Աճառյանը կրկին պնդում է իր ասածը 443—450 թթ. վերաբերալ: Բայց, թերևս, ավելի ճիշտ է Ն. Բյուզանդացին, որ ընդունում է 443—444 թթ.: Սրան կողմնակից են և ուրիշ բանասերներ: Գրքում քննադատվում են այն հեղինակները, որոնք

Կորյունի երկը գրված են համարում Վարդանանց պատերազմից հետո:

Կորյունի, Ագաթանգեղոսի ու Փավստոսի երկերի առնչությունների խնդրում Հ. Աճառյանը կանգնած է բանասիրության մեջ արդեն տարածված այն տեսակետի վրա, ըստ որի նման հատվածները Ագաթանգեղոսն ու Փավստոսը վերցրել են Կորյունից (էջ 31): Հ. Աճառյանը խորապես համոզված է ու ընթերցողին էլ համոզում է, որ Կորյունի երկը, որպես հայ գրերի գյուտի, Մաշտոցի կյանքի ու գործի պատմության աղբյուր, ամենից վավերականն է ու ստույգը: Իսկ դա բացատրում է նրանով, որ հեղինակը «ոչ միայն ժամանակակից է այն դեպքերին, որ պատմում է, այլև ականատես ու շատ անգամ էլ գործակից» (էջ 32): Նշանավոր բանասերը ընդգծում է, որ ճիշտ են Կորյունի ժամանակագրական տվյալները: Նա, հակառակ որոշ բանասերների, մատնացույց անելով մատենագրի երկի վերջաբանը, գրում է՝ «Ընդամենը 11 տող է այդ վերջաբանը, և այդ 11 տողի մեջ խտացված հիշված է 9 անուն և 8 թվական: Եվ այս բոլոր թվերն ու անունները բացարձակապես ճիշտ են և համաձայն արտաքին ստույգ պատմության»: Այնուհետև ավելացնում է՝ «Դա մի գոհար է մեր հին ժամանակագրության մեջ» (էջ 34): Սակայն, այդուհանդերձ, Հ. Աճառյանը տվյալների որոշ ձշտումներ է առաջարկում:

Մեսրոպին ու գրերի գյուտին ժամանակով մոտ եղած Ղ. Փարպեցու և Մ. Խորենացու երկերը որպես աղբյուրներ բնութագրված են համառոտ: Դրանց հաջորդում են հետագա դրերում գրված աղբյուրների բնութագրականները: Այսպիսով ներկայացվում են մատենագրական 33 մեծ ու փոքր աղբյուրներ:

Ըստ վերը նշված բաժանման՝ հին աղբյուրներից հետո հիշատակվում ու բնութագրվում են նոր աղբյուրները: Սրանց մեջ հեղինակը նկատի է ունեցել նյութին վերաբերող այն աշխատությունները (հայ և օտար հեղինակների), որոնք ստեղծված են XVIII դարից հետո (մասնակի տարբերություններով): Սրանք, իհարկե, գրված են հին աղբյուրների հիման վրա, սակայն կարևոր են շատ տեսակետներից:

Այս գրականությունը Հ. Աճառյանը բաժանում է պատմական ու քննական տեսակների և հատկապես նշում է վերջիններիս կարևորությունը:

Նա միաժամանակ հիշեցնում է, որ կան աշխատություններ էլ, որոնք և՛ պատմական, և՛ քննական մասեր են պարունակում: Դրանք բանակով գերակշռում են զուտ պատմական և զուտ քննական աշխատություններին: Հ. Աճառյանը նշում է, որ մատենագիտական ցանկը

կազմիլիս շեշտը դրել է պատմա-քննական և մանավանդ քննական աշխատությունների վրա ու ձգտել է տալ ըստ կարելիության լրիվ ցուցակ: Հեղինակի մատենագիտական այդ աշխատանքը նախ և առաջ կարևոր է եղել իր իսկ աշխատության ստեղծման համար, բայց և միաժամանակ արժեքավոր նպաստ է բուր Նրանց, ովքեր զբաղվում են թեմային վերաբերող այլևայլ հարցերի ուսումնասիրությամբ: Իհարկե, ավելի ուշ տարիներին էլ շատ բան է գրվել, սակայն բնականորեն չէին կարող արտացոլվել այս ցանկում:

Մեսրոպ Մաշտոցի կենսագրությանը նվիրված է գրքի մոտ հինգ վեցերորդ մասը (էջ 69—400): Սա ըստ ամենայնի գիտական կենսագրություն է՝ հարակից բազմաթիվ հարցերի ընդգրկումով և ամենահանգամանակիցն է մինչ այժմ եղածների համեմատությամբ: Նախապես նշենք, որ հեղինակն այստեղ օգտագործել է այս ուղղությամբ բանասիրության ձեռք բերած նվաճումները, բայց բոլոր դեպքերում «պատրաստի նյութ» չի շարագրել: Նա նկատել ու վեր է հանել նաև մի շարք լուծելի հարցեր, որոնք բանասերների աշխատություններում կա՛մ ճիշտ լուծում չեն ստացել, կա՛մ էլ որոշ դեպքերում պատշաճ ուշադրության չեն արժանացել: Մեկ առ մեկ ցույց տալ այդ բոլորը՝ նշանակում է ամբողջովին վերապատմել գրքի համապատասխան բաժնի բովանդակությունը, որը հնարավոր չէ այս համառոտ գրախոսականում անել, և դրա հարկն էլ չկա: Այստեղ կաշխատենք միայն մատնացույց անել մի քանի հիմնական խնդիրների քննարկումը, գնահատումը կամ լուծումը և մինչ այժմ արտահայտված այնպիսի տեսակետների վերստին հաստատումը, որոնք այսօր առանձնապես կարևոր են գիտության համար:

Բանասերներին շատ է հետաքրքրել Մեսրոպ Մաշտոցի ծագման խնդիրը: Այդ մասին հայտնվել են տարբեր կարծիքներ: Ը. Աճառյանը, վերլուծելով Հացեկաց գյուղին վերաբերող՝ Բուզանդի երկի հայտնի հատվածը, գալիս է այն եզրակացության, որ կառնազատ (հավանաբար նշ. «ստորին ազնվական») այդ հատվածում («կարճագատացն» ձևով) վերաբերում է ամբողջ գյուղին, ուրեմն Մեսրոպն էլ ամենաշատը այդպիսի ծագում է ունեցել: «Բուզանդն ուղում է ասել, թե Հացեկաց գյուղը կարճագատների կալվածք և սեփականությունն էր, ուստի Մեսրոպն էլ, որ հացեկացի էր, առ առավելն կառնազատ Մամիկոնյան էր և ոչ ավելի» (էջ 72): Սակայն Ը. Աճառյանը միաժամանակ մերժում է որոշ բանասերների (Դ. Նահապետյան, Ն. Ակինյան և այլք) այն կարծիքը, ըստ

որի, իբր, Բուզանդի երկի նշված հատվածում հիշատակված Վրիկը Մեսրոպի հայր Վարդանն է:

Ը. Աճառյանն իրավացիորեն ընդգծում է, որ Մեսրոպ Մաշտոցը նախնական կրթությունն ստացել է իր իսկ գավառում (Տարոնում), գուցե և Ս. Կարապետի վանքում, թեև Կորյունը նրա կրթություն ստանալու տեղը որոշակի չի նշում: Սակայն Ը. Աճառյանը (ուրիշներն էլ, ինչպես, օրինակ, Մարկվարտը) այստեղ ևս հենվում է Կորյունի երկի վրա՝ հիշեցնելով, որ Կորյունը գրել է՝ «Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց»: Դա նշանակում է, որ Մաշտոցը կրթություն ստացել և եկել հասել էր Վաղարշապատ՝ Տարոնի գավառից: Ը. Աճառյանը իբրև օժանդակ փաստարկ ավելացնում է Կ. Սասնեցու նշումը («եւ սակաւ ինչ հմտացեալ յիւրում նախնային...»): Իսկ Անտիոքում սովորած լինելու վերաբերյալ, ձեռքի տակ փաստեր չունենալու պատճառով, միայն Ն. Ակինյանի հողվածի կապակցությամբ հիշատակում ու անցնում է:

Հեղինակը ճիշտ է կողմնորոշվել Մաշտոցի լեզվագիտական պատրաստությանը և աշխարհիկ պաշտոնավարումներին վերաբերող հարցերում: Նա տրամաբանվածությամբ է հիմնավորում Մաշտոցի մեծ գործի հղացումն ու իրագործումը:

Ը. Աճառյանը համոզված է, որ հայ ժողովուրդը շուներ սեփական գիր ու գրավոր գրականություն, գրավոր խոսքի համար օգտվում էր հունարեն, ասորերեն ու պարսկերեն լեզուներից: «Ուրիշ խոսքով՝ հայոց բանավոր գրականությունը հայերեն էր, իսկ գրավոր գրականությունը՝ պարսկերեն, հունարեն կամ ասորերեն» (էջ 94): Ժողովրդի խավար վիճակը, քաղաքական նոր պայմանները և հեթանոսական մերժված կրոնի որոշ աշխուժացումները դրությունը դարձնում էին խիստ վտանգավոր: Հենց այդ պայմաններում էլ Մեսրոպ Մաշտոցը, հրաժարվելով աշխարհիկ պաշտոններից, իրեն նվիրեց ճգնակեցության, սակայն շուտով անցավ քարոզչական գործունեության: Այստեղ շատ դժվարություններ կրեց, մոտիկից զգաց ու խորապես ըմբռնեց ժողովրդի վիճակը և խորհեց դրությունից դուրս գալու ուղու մասին: Ահա թե ի՛նչ է ասում Ը. Աճառյանը՝ «Մեսրոպի մտատանջությունը ավելի հեռուն էլ էր գնում. ուր պիտի տաներ օտար լեզուների այդ տիրապետությունը. երկիրը արդեն պառակտված, ժողովուրդը երկու օտար տիրապետությունների մեջ բաժանված, թագավորությունը կործանման անդունդին մոտիկ, ի՛նչը պիտի կարողանար փրկել ու պահպանել

ազգն ու ժողովուրդը իսպառ բնաջինջ լինելուց՝
 Եվ այսպես՝ տրտում հոգսերով պաշարված և
 խորհրդածությանց ծփանքում տարակուսած
 փնտրում էր փրկական ելքը: Եվ ահա այս
 մտածմունքների և տարակուսանքների ժամա-
 նակ ծագեց իր մտքում փրկարար լույսը, հա-
 յերեն գրեցր գտնելու և գրականություն ստեղ-
 ծելու գաղափարը: Նրանով պիտի փրկեր ազ-
 գությունը կորստից» (էջ 98):

Անցնելով գրերի գյուտի պատմության վեր-
 հանմանը՝ Հ. Աճառյանը, ըստ աղբյուրների,
 քայլ առ քայլ հետևում է Մեսրոպ Մաշտոցի
 գործունեությանը, արտասահմանյան ուղևորու-
 թյանը, Եղեսիայում ու Սամոսատում կատարած
 գործերին: Նա, Կորյունի երկի համապատաս-
 խան հատվածում մի փոքրիկ ուղղում կատա-
 րելով (որպիսին արել էր և Ն. Բյուզանդացին),
 միաժամանակ հենվելով զուգարեյ քայի ներ-
 գործական նշանակության և «ուղարկել» իմաս-
 տի վրա (ըստ Ն. Բյուզանդացու վերլուծու-
 թյան)¹, ցույց է տալիս, որ Մեսրոպը իր հետ
 տարած աշակերտների մեկ խմբին հունական
 կրթության համար ուղարկում է Սամոսատ,
 ինքն էլ մնում է Եղեսիայում (աշակերտների
 մյուս խմբին ասորական կրթության համար
 թողնում է Եղեսիայում)²:

Այս պարզաբանումը հասարակ հարց չէ: Դա
 միաժամանակ նախադրյալ է գրերի գյուտի
 վայրի որոշման համար: Հ. Աճառյանը կանգ-
 նում է այն տեսակետի վրա, որ Մեսրոպը մեր
 գրերի գյուտը կատարել է Եղեսիայում և ոչ թե
 Սամոսատում: Իսկ ինչո՞ւ դնաց Սամոսատ,
 ինչո՞ւ դիմեց Հոռոփանոսին: Նրա նպատակն էր
 մի գեղագիր գտնել և իր ստեղծած տառերը
 գեղագրորեն գծագրել տալ (պատրաստել տալ
 գեղագրված պնակիտ): Այդ գեղագիրն էլ եղավ
 Հոռոփանոսը, որը, ըստ Մեսրոպի հնարած տա-
 ուձների, գծագրեց հայերեն՝ այբուբենը (հի-
 շենք, որ այս կարծիքին են նաև այլ բանա-
 սերներ): Հենց այդ առիթով էլ Հ. Աճառյանը
 քննում է Կորյունի նշած ներագոյն, լայնագոյն,
 կարն, երկայն, առանձին, կրկնաուր անվանում-
 ները և պաշտպանում է այն տեսակետը, թե
 դրանք վերաբերում են տառերի գեղագրությանը:

¹ Ն. Բյուզանդացու բացատրությունը զե-
 վեցիկ համարելով՝ օգտագործել է նաև Գ.
 Տեր-Մկրտչյանը ու համապատասխան եզրա-
 կացության հանգել:

² Հիշենք նաև, որ Կորյունի երկի համա-
 պատասխան հատվածը միանգամայն ճիշտ մեկ-
 նարանություն է թարգմանել Մ. Արեղյանը:
 Բացի դրանից, նա հիշյալ հատվածի գիտական
 խոր ու արժեքավոր վերլուծություն է տվել
 1941 թ. հրատարակած իր հոյակապ հոդվածում:

գծերի բնույթին ու տառապատկերներին (և ո՛չ
 հնչյուններին): Նա ճիշտ է համարում առաջին
 շորսի վերաբերյալ Մ. Արեղյանի տված բա-
 ցատրությունները, իսկ վերջին երկուսի համար
 իր պարզաբանումներն է անում (էջ 125—126):
 Մերժում է գրերի գյուտին Հոռոփանոսի մաս-
 նակցությանը վերաբերող ենթադրությունը:

Հեղինակը հատուկ կարևորություն է տալիս
 այն հարցին, թե գրերի ստեղծման համար Մես-
 րոպ Մաշտոցն ինչո՞ւ գնաց արտասահման, մի՞-
 թե այդ գործը Հայաստանում չէր կարող կա-
 տարել: Այս հարցի պատասխանը նա տալիս է
 մի ուրիշ խնդրի պարզաբանումով. ի՞նչ էր
 Դանիելից ստացածը, նշանագրերի մի ցուցակ,
 թե այդ նշանագրերով գրված գիրք: Հ. Աճառ-
 յանը, ուրիշ շատ բանասերների նման, ելնելով
 սկզբնաղբյուրներից, ընդունում է, որ Դանիելից
 ստացածը նշանագրերի ցուցակ էր և ոչ թե
 գիրք: Հետևաբար նա նշում է, որ Մեսրոպ
 Մաշտոցը, այդ գրերը փորձարկելուց և հայե-
 րենի հնչյունական համակարգին անհամապա-
 տասխան տեսնելուց հետո, մեկնեց արտասահ-
 ման՝ այն հույսով, որ թերևս գտնի հիշյալ տա-
 ուրով գրված գիրք և նրա միջոցով լրացնի
 պակասող գրերը, որպեսզի հայերենի բոլոր
 հնչյունների (= հնչույթների) համար լինեն
 համապատասխան տառեր: Սակայն նրա հույսը
 չի արդարանում: Դանիելի մոտ (Ամիգում)
 այդպիսի գիրք չգտնելով՝ նա անցնում է Եղե-
 սիա և գրադարաններում որոնումներ կատա-
 րում, այստեղ էլ ցանկալի արդյունքի չի հաս-
 նում: Դրանից հետո խնդիրը շատ որոշակի է
 դառնում՝ ստեղծել սեփական հայերեն տառեր,
 որը և Մեսրոպ Մաշտոցը կատարում է փայ-
 լուն հաջողությամբ: Իհարկե, չպետք է մոռա-
 նալ, որ նա արտասահմանում ուրիշ անելիք-
 ներ էլ ուներ: Ահա այսպիսով տրամաբանորեն
 հիմնավորվում է Մեսրոպ Մաշտոցի արտասահ-
 ման ուղևորվելը:

Հ. Աճառյանը միաժամանակ հիշատակում
 և մերժում է տարբերվող ու անընդունելի տե-
 սակետները: Խոսելով Մեսրոպի վերադարձի և
 Ռահ դետի ավին նրա ցնծագին դիմավորման
 մասին՝ նա ենթադրում է, որ Կորյունի հիշա-
 տակած Ռահ գետը Սև ջուրը պիտի լինի (էջ
 163)՝ հակառակ նրանց (Ֆետոյանի, ինչպես
 և ուրիշների), որոնք Ռահ անվան տակ հաս-
 կանում են Նրասխը:

Գրքում մեծ տեղ է հատկացված Մեսրոպի
 հետագա լուսավորական լայն գործունեությանը:
 Առանձին գլուխներով, ըստ վայրերի ներկա-
 յացված են նրա ծավալման տարրեր փուլերը՝
 երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ քա-
 ռոզությունները (առաջինը գրերի գյուտից
 առաջ էր): Այդ գործունեության բնութագրումն

ուղեկցվում է բանասիրական հարցերի քննությունում ու պարզաբանումներով:

2. Աճառյանը բնականաբար չի մոռանում կանգ առնել հարևան վրացի և աղվան ժողովուրդների մշակութային առաջընթացի մեջ Մեսրոպ Մաշտոցի կատարած շատ օգտակար ու խիստ զնահատելի դերի վրա: Նա, հարազատ մնալով հնագույն աղբյուրին (Կորյունի երկին), պատմում է, թե ինչպես Մեսրոպ Մաշտոցը հայ գրերի ստեղծման մեծ խնդիրը գերազանց կերպով իրագործելուց հետո, քարոզչական երրորդ գործունեության ընթացքում, Սյունիքում եղած ժամանակ գրեր է ստեղծում վրաց լեզվի համար, մեկնում է Վրաստան, ներկայանում թագավորին ու եպիսկոպոսին և Ջաղայի օգնությունով սկսում ուսուցանել իր հորինած այդ գրերով:

2. Աճառյանն ընթերցողին տեղյակ է պահում, որ բանասիրության մեջ կան խնդրին վերաբերող տարբեր (թեր և դեմ) կարծիքներ: Բերելով ու քննելով դրանք՝ նա գտնում է, որ բոլոր դեպքերում հիմք պետք է ընդունել Կորյունի հաղորդումը: «Կասկածել Կորյունի վրա նշանակում է առհասարակ ուրանալ պատմությունը» — գրում է նա (էջ 186): Կորյունի հաղորդածը՝ Մաշտոցի կողմից վրացերեն լեզվի գրեր ստեղծելու մասին, այս գրքում իրավացիորեն ներկայացված է որպես պատմական ճշմարտություն:

Աղվանից գրի ստեղծման հարցը շոշափելիս ևս 2. Աճառյանը հարազատ է մնում Կորյունի հիշատակումներին: Ըստ այսմ՝ նա հավաստիացնում է, որ աղվանական գրերը Մաշտոցն ստեղծել է իր քարոզչական շորրորդ գործունեության ընթացքում, այսինքն այն ժամանակ, երբ զնացել էր Հայաստանի՝ հունական տիրապետության տակ ընկած մասը՝ ժողովրդի այդ հատվածի մեջ լուսավորություն տարածելու՝ դպրոցներ հիմնելու, հայ գիրը ուսուցանելու նպատակով: Հենց այս ժամանակ էլ նա հանդիպում է աղվանական քահանա Բենիամենին, սրան հարցուփորձ է անում, պարզում է նրա ժողովրդի լեզվի հնչյունական դրությունը և համապատասխան գրեր ստեղծում: Իմիջիայլոց, տողատակի ծանոթության մեջ (էջ 216) 2. Աճառյանը, ակնարկելով Ն. Ակինյանի մի կարծիքի մասին, գտնում է, որ կարելի է ընդունել, թե Մաշտոցի կողմից աղվանական գրերի ստեղծումը տեղի է ունեցել Կոստանդնուպոլսում:

Այսպիսով՝ աղվանական գրերն արդեն ստեղծված էին, երբ մեծերախտ գիտնական-լուսավորիչը զնաց Աղվանք՝ սկսելով իր քարոզչական հինգերորդ գործունեությունը, որի ընթացքում այդ երկրից բացի, նա եղավ Բաղասական կող-

մերում, Վրաստանում (երկրորդ անգամ), ապա՝ Հայաստանի հյուսիսային կողմերում:

Ըստ սկզբնաղբյուրների՝ առանձին-առանձին բնութագրելով Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական-քարոզչական գործունեության վերահիշյալ հինգ փուլերը՝ 2. Աճառյանն այդպիսով հարցը չի սահմանափակում: Նա ընդգծում է Մեսրոպ Մաշտոցի անդադրում աշխատանքը և անսահման նվիրվածությունը ժողովրդի լուսավորման գործին՝ այդ և ուրիշ շրջագայություններից հետո ևս, մինչև որ կնքում է իր մահկանացուն:

Մեսրոպ Մաշտոցի գործի ու գերի լայն բացահայտման համար 2. Աճառյանը կանգ է առնում հայ մատենագրության սկզբնավորման ու ընդհանրապես ժամանակի մշակութային մեծ շարժման դրսևորումների վրա:

Հեղինակը ցույց է տալիս Մեսրոպ Մաշտոցի, ապա և նրան աջակցած Սահակի, նրանց աշակերտների բացառիկ տեղը V դարի մշակութային շարժման մեջ: Բնութագրելով այդ շարժումը՝ նա ընդգծում է՝ «Բայց ինչ որ այդ բոլորի մեջ գերազանցում և ամբողջ շարժման անիվն էր կազմում, դա էր անկախ ազգային ինքնաճանաչության և ազգային գիտակցության զարգացումը...» (էջ 270):

Գրքում խոսվում է և այն հարգանքի մասին, որ սկսած վաղ ժամանակներից տածվել է Մեսրոպ Մաշտոցի ու իր գործակիցների հիշատակի նկատմամբ: Հիշատակվում են նրանց նվիրված տոները, գանձերն ու շարականները:

Առանձին զխով պատմվում է Մեսրոպ Մաշտոցի երկասիրությունների հարցի մասին: Մեկ առ մեկ մատնացույց են արվում նրան վերագրվող երկերը և համապատասխան փաստերով մերժվում վերագրումները: Այդպիսի երկերի թվում նշվում է նաև «Յաճախապատում ճառք»-ը, որը, ինչպես հայտնի է, մի ժամանակ վերագրվում էր Գրիգոր Լուսավորչին, որոշ ուսումնասիրողների կողմից ճանաչվում է որպես Մեսրոպ Մաշտոցի հեղինակած գործ: 2. Աճառյանը լեզվակառուցական փաստերի հիման վրա դադարում է ետդասական գործ (Եզնիկի երկի հետ եղած առնչումներն էլ բացատրում է հակառակ փոխառություններով, ինչպես մի քանի փոքրիկ հատվածների ցուցադրումով նշել է նաև Գ. Գալեմքարյանը): Նա թեև հիշատակում է, բայց հաշվի չի առնում նաև Ն. Բյուզանդացու կարծիքն այն մասին, թե «Յաճախապատում ճառք»-ը գրվել է դասական շրջանում, սակայն հետագայում խմբագրման է ենթարկվել՝ ձեռք բերելով ետդասական հատկանիշներ: Պետք է նշել, որ Նորայր Բյուզանդացու այս կարծիքի անհավանական չէ:

Գիրքն ավարտվում է «Սահակի և Մեսրոպի ժամանակագրությունը» զխով, որտեղ աղբյուր-

Ների ընձեռած փաստերի հաշվառումով և համաժամանակյա իրողությունների զուգադրումներով ցույց են տրվում հիմնական դեպքերին վերաբերող տարեթվերը: Հեղինակը, իր հավումները կատարելով և թվականները նշելով, քննում է բազմաթիվ ուսումնասիրողների առաջադրած տարեթվերը, իր համոզմունքների տեսանկյունից վերաբերմունք արտահայտում նրանց նկատմամբ: Այստեղ, իհարկե, կան առանձին վիճելի կետեր, որոնք կարող են հատուկ բնության նյութ ծառայել:

Ընդհանրապես գիրքը հարուստ է տեղեկություններով: Այնտեղ բերված են նաև նյութի

շուրջը բանասիրության մեջ հանդես եկած հեղինակին հայտնի տեսակետները, մի հանգամանք, որով գիրքը ներկայանում է միաժամանակ որպես համապատասխան ուսումնասիրությունների յուրօրինակ պատմություն: Ակնբախ են գիտականությունն ու լրջությունը, իսկ հեղինակի շարադրման պարզ և մատչելի ոճը նպաստում է բովանդակության յուրացմանը: Թեև առանձին դրույթներ հնացած են (ինչպես նշել է խմբագիրը), սակայն շեն նսեմացնում գրքի ընդհանուր արժեքը:

Պրոֆ. Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ